

ՅԱՐԱՏԵՒԵԼ

Սաղմոսերգուին համար, իր պարագան շատ պարզ է եւ յստակ. «Նրկրի վրայ ալ քեզմէ գատ ո՛չ մէկուն կը բողոքում» (Սաղմ. 73.25): Մեր հոգեւոր կեանքի ամէն տեսակ յառաջդիմութիւնը կը յատկանշուի դէպի մէկ նպատակի եւ կարիքի ձգտումով:-- Աստուած՝ Ինք: Հոգեւոր կեանքի մեր բոլոր յառաջդիմութիւնները պէտք է ծառայեն զԱստուած աւելի մօտէն ճանչնալու եւ սիրելու նպատակին, որպէսզի կարենանք Սաղմոսերգուին պէս ըսել. «Աստուած իմ սիրտիս գորութիւնը ու իմ բաժինս է յաւիտեան» (73. 26): Մեր այդ հեռանկարը կը փոխէ մեր վերաբերմունքը ամէն բանի հանդէպ: Տառապանք եւ նեղութիւն կը դառնան միջոցներ՝ Աստուծոյ հանդէպ մեր ծարար յագեցնելու: Յուսախարութիւններ կը վերածուին միջոցներու, մեզ հետզհետէ հեռացնելով երկրային զբաղումներէ՝ աւելի Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ մնալու համար: Նոյնիսկ մեղքը, ապաշխարութեան փորձառութեան ետք, մեզ Աստուծոյ աւելի մօտեցնելու ազդակի մը կը վերածուի, որպէսզի Անոր սէրն ու ներողամտութիւնը մօտէն զգանք: Բոլոր բաները բարիին գործակից կը դառնան, երբ մեր նպատակը բարձրագոյն բարութեան՝ Աստուծոյ մօտենալու համար է: Առաքելին պէս, մենք ալ կրնանք ըսել. «Հետամուտ եմ բռնելու զայն, որուն համար ալ բռնուեցայ Քրիստոսի Յիսուսէ» (Փիլիպ. 3.12): Ի՞նչ բանէ մղուած յառաջ կ'ընթանանք մեր հոգեւոր կեանքին մէջ: Պէտք է խոնարհաբար եւ երախտագիտութեամբ փոխադարձեմք Անոր սիրոյն: Բայց ամէն բան կը սկսի Աստուծմով: Ինքն է, որ կը փնտռէ մեզ, որպէսզի մենք ալ փնտռենք Զինք:

Յարատելութիւն պարգեւէ Տէր:

ԾՄԾՂԱՅ



Ծննդայի գործածութիւնը առկա է նաեւ աշխարհիկ նուագախումբերուն մէջ, որ մերթ ընդ մերթ տիրապետող իր զնգոցով կը միջամտէ երաժշտական ներկայացումներուն, իր գորեղ ձանով ներգրաւելով երաժշտաւեր հասարակութեան ուշքն ու ներաշխարհը:

Ծննդաներուն արժէքն ու առաւելութիւնը կը կայանայ պղինձի խառնուրդին մէջ, ինչ որ անոր զիւ հնչողականութեամբ եւ ձայնային թրթռացումով կը դարձնէ բացառիկ եւ եզական:

Այս արհեստին եւ արուեստին զաղտնիքը կը պատկանի Սեբաստացի Զիւճեան գերդաստանին, ինչ որ համանուն արհեստէն առած են իրենց ազգանունը:

Անշուշտ ծննդային գործածութիւնը փորձառութիւն կը պահանջէ, նախ կշռոյթը պահելու, ճիշդ պահուն զնգացնելու եւ խանդ տալու համար երգին՝ թէ երաժշտութեան:



ԺՁ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 5 ՆՈՅՏԵՎԵՐ 2023 ԹԻԻ 45

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ Ես. 22.15-25: Եփ. 1.1-14: Ղկ. 8.17-21

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՄԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ 8.17-21

Չկայ ծածուկ բան մը, որ չյայտնուի եւ կամ գաղտնի բան մը, որ չգիտցուի եւ երեսան չգայ: Ուրեմն ուշադիր եղէ՛ք, թէ ինչպէ՞ս կ'ընդունիք այս խօսքերը, որովհետեւ ունեցողին պիտի տրուի, իսկ չունեցողէն պիտի առնուի նոյնիսկ այն՝ ինչ որ կը կարծէ, թէ ունի:

Յիսուսի մայրն ու եղբայրները իրեն եկան, բայց խոտն բազմութեան պատճառով չկրցան իրեն մօտենալ: Լուր տուին իրեն, ըսելով. «Մայրդ ու եղբայրներդ դուրսն են եւ կ'ուզեն քեզ տեսնել»:

Յիսուս ըսաւ. «Մայրս ու եղբայրներս անոնք են, որոնք Աստուծոյ խօսքը կը լսեն եւ կը գործադրեն»:

«Մայրս ու եղբայրներս անոնք են, որոնք Աստուծոյ խօսքը կը լսեն եւ կը գործադրեն»

Վստահաբար մեզմէ իւրաքանչիւրին փափաքն է ըլլալ եղբայր Քրիստոսի: Սիրելիներ կարելորդ կամենալն է. եթէ կ'ուզենք Քրիստոսի եղբայրներ ըլլալ, իր կամքը պէտք է կատարենք, ականջ պէտք է տանք Աստուծոյ ձայնը լսելու աղօթքի ճամբով: Աստուծոյ ձայնը լսելու համար պէտք է լաւապէս ճանչնանք զԱստուած Աստուածաշունչին ընդմէջէն: Աստուածաշունչը մեր ամէնօրեայ հոգեւոր սնունդի աղբիւր դարձնենք, մենք՝ որ բոլորս անոր ծարար ունիք: Կարդանք, սնանկնք, այն ատեն պիտի լսենք եւ գործադրենք այն ինչ, որ կը պատգամէ մեզի Քրիստոս:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐԲՈՑՆ՝ ՍՏԵՓՄԱՆՈՍԻ ՀՌՈՍԱՅ
ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՒ ԶԱՀԱՆԱՅԻՑՆ ԵՒ
ՍԱՐԿԱՆԱԳԱՑՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴՈՑՆ

3-րդ դարուն Հոռմի մէջ ապրած քաջ
առաջնորդ եղած է Ստեփանոս Հոռմայ
հայրապետը: 254 թուականին կը բարձ-
րանայ Հոռմի աթոռին վրայ եւ կը գա-
հակալէ մինչեւ իր նահատակութիւնը՝
257 թուական:

Ստեփանոս Հայրապետ եղած է իր
հօտը պաշտպանող եւ քաջալերող հո-
գեւորական մը: Ան նոյնիսկ դարձի կը
բերէ եւ քրիստոնեայ կը մկրտէ Նեմե-
սիոս անունով հեթանոս իշխան մը եւ
անոր կոյր դուստրը, որ մկրտուելէն
ետք կը բժշկուի եւ աչքերը կը բացուին:
Իշխանը նոյնիսկ սարկաւագ կը ձեռ-
նադրուի եւ սակայն իր ունեցած հաս-
տատ հաւատքին համար կը նահա-
տակուի կայսեր կողմէ: Այսպիսով Ստե-
փանոս հայրապետի գահակալութեան
շրջանին բազմաթիւ հոգեւորականներ
եւ հաւատացեալներ կը նահատակուին
Հոռմի մէջ:

Օր մը, երբ Ստեփանոս Հայրապետ Ս.
եւ Անմահ պատարագ կը մատուցէր,
յանկարծ զինուորներ կը պաշարեն եկե-
ղեցին եւ կը փորձեն խորտակել դուռը եւ
ներս մտնել: Այն պահուն երբ Ս. Հայրա-
պետը կը հաղորդուի եւ կը հաղորդէ
ժողովուրդը, զինուորները ներս խուժե-
լով կը նահատակեն զինք իր արիւնը
խառնելով Ս. Հաղորդութեան սկիհին մէջ
գտնուող Քրիստոսի սուրբ արեան:
Հաւատացեալներ պատուով կը թաղեն
գայն: 8-րդ դարուն անիւնները կը
փոխադրուին իր անունը կրող վանքի մը
մէջ եւ այնտեղ կը հանգչի ան այսօր:

Տօնը այս տարի կը գուգադիպի Երկու-
շաբթի 6 Նոյեմբերին:

ՀԱՐԿՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

**Հարցում.- Ի՞նչ է նշանտուրի
մատանիին իմաստը:**



Պատասխան.- Նշանտուրիները իբր սիրոյ
գրաւական կամ նշան իրարու կը
նուիրեն ոսկեայ մատանի, գորս կ'ան-
ցընեն իրենց մատնեմատերուն:

Մատանիներուն ոսկիէ շինուած ըլ-
լալը կը նշանակէ, թէ ինչպէս որ ոսկին
ազնիւ ու չժանգոտող մետաղ մըն է,
նմանապէս գանձնաճ գործածողներն ալ,
իրարու հանդէպ ունեցած սէրը պիտի
պահեն մաքուր եւ անարատ: Նոյնպէս՝
մատանիի կտրութեան օրինակով,
իրենց սէրը պիտի կեդրոնանայ միմ-
եանց անձերու շրջանակին մէջ, անկէ
դուրս չելլելու պայմանով: Նկատելով
նաեւ, որ մատնեմատէն երկարող երակ
մը ուղղակի սրտին կապուած է, ուստի
խորհրդաբար մատանիները կ'ընդուն-
ուին իբրեւ երկու սրտերը իրարու
միացնող միջոցներ:

Սովորութիւն եղած է, նաեւ տղուն
կողմէ աղջկան նուիրել ականջի օղ եւ
թեւի ապարանջան: Օղը՝ տեղեկութեան
նշան է, թէ՛ աղջիկը գայն նուիրող երի-
տասարդին մասին հարկ եղած տեղե-
կութիւնը քաղած եւ ապա յարմար դա-
տած է գայն ունենալ իբր նշանած եւ ա-
պագային ալ՝ ամուսին: Ուրեմն անոր
սէրն ու անունը ընդմիշտ իր ականջէն
կախուած պիտի մնան: Իսկ ապարան-
ջանը որ կը հագնի կը նշանակէ, թէ այդ
թեւերը կապուած ու վերապահուած են
միայն գայն նուիրողին եւ անփակտելի են:

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

ՈՐՈ՛ՆԷ ԿՐՆԱՆ ՏԵՄՆԵԼ ՎԻՐԱՒՈՐ ՄԱՐԳԻԿԸ

«Տեսաւ վիրաւորը եւ գթաց ա-
նոր» (Ղկ. 10.33): Յիսուս տեսաւ, որ
մեղքը վերք յառաջ բերած էր մար-
դուն սրտին մէջ: Ի՞նչպէս տեսաւ:
Ան, որուն հոգիին աչքերը բաց են՝
ան միայն կրնայ տեսնել մեղքով
խոցոտուած մարդիկը եւ գթալ ա-
նոնց: Մեղքի տիղմին մէջ թաւալող
մարդը չի կրնար անդրադառնալ
մեղքի կործանարար ներկայու-
թեան: Մեղքէն ազատագրուելէ ետք
միայն կրնանք գիտնալ, թէ որքան
ուզեղ բան է մեղքը:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵԻՈՐ ԴԱՍԸ

Սիրելի ընթերցող: Դուն կրցա՞ծ
ես դուրս գալ մեղքի եւ մթութեան
անդունդէն ու բարձրանալ դէպի
լուսաւոր Թափոր լեռը: Եթէ յա-
ջողած ես այդ լեռը բարձրանալ,
հոնկէ միայն կրնաս տեսնել մեղքի
խաւարին մէջ խարխափող մարդի-
կը: «Տեսաւ վիրաւորը»: Դուն չես
կրնար տեսնել վիրաւորը, եթէ դուն
ինքդ վիրաւոր մըն ես: «Եւ գթաց
անոր»: Դուն չես կրնար գթալ
ուրիշին, եթէ դուն ինքդ անգութ ես՝
դուն քու անձիդ հանդէպ: Եթէ դուն
քու հոգիիդ չես խղճար՝ անկարելի
է, որ խղճաս ուրիշին հոգիին:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

ԵՐԲ ԾՆՆՐ ՀԻՆՆԳՈՒԹԵՆ ԵՒ ՄԱՀՈՒՆՎԱՆ ՎՏԱՆԳԻՆ ՄԷՋ ԵՍ,

Կարդա՛ ՍԱՂՄՈՍ 41

Երանի՛ անոր, որ թշուարին հոգ
կը տանի: Նեղութեան ժամանակ Տէրը
գայն պիտի ազատէ: Տէրը պիտի պահ-
պանէ գայն, անոր կեանքը պիտի եր-
կարէ, գայն երանելի պիտի դարձնէ այս
աշխարհի մէջ եւ գայն պիտի չձգէ
թշնամիներու քմահաճոյքին: Տէրը
պիտի օգնէ անոր, հիւանդ պատկած
ժամանակ եւ իր հիւանդութենէն զինք
պիտի ապաքինէ: Ես Տիրոջ ըսի.–
«Ողորմէ՛ ինձի, Տէր. բժշկէ՛ զիս, ես
քեզի դեմ մեղանչեցի»: Թշնամիներս
չարակամութեամբ կ'ըսեն.– «Ե՞րբ պի-
տի մեռնի եւ անունն իսկ չյիշուի»: Ով,
որ ինձի տեսութեան կու գայ՝ կեղծ-
կեղծ խօսքեր կը խօսի, բամբասանքի
նիւթ կը ժողովէ, դուրս ելլելով՝ կը
տարածէ: Բոլոր անոնք, որ զիս կ'ա-
տեն՝ կը հաւաքուին, եւ չար վախճանս
կ'երեւակայեն, փսփսալով իրարու.–
«Զարագուշակ հիւանդութեան բռնը-
ւած է, անկողինին գամուած է, եւ ա՛լ
բնաւ ոտքի չ'ելլեր»: Նոյնիսկ ամենէն
մտերիմ ընկերս, որուն կը վստահէի,
եւ որ ինձի սեղանակից կ'ըլլար միշտ,
ա՛ն ալ ինձի դաւաճանեց: Բայց դուն,
ո՛վ Տէր, ողորմէ՛ ինձի, ոտքի՛ հանէ
զիս, որ ես անոնց փոխարէնը հատու-
ցանեմ: Թշնամիներս թող չկարենան
յաղթանակ տանիլ իմ վրաս եւ ատով
գիտնամ՝ թէ կը հաւնիս զիս: Բայց դուն
արդէն զիս կ'ընդունիս՝ անմեղութեանս
համար եւ յաւիտեան զիս կը պահես
քու ներկայութեանդ մէջ:

Օրհնեալ՝ է Տէրը, Աստուածը իր
ժողովուրդին, յաւիտեանէ մինչեւ
յաւիտեան: Ամէն: